

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2023 թվականի  
հունվարի 5-ի N 28 - Ա որոշման  
«Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2018 թվականի  
օգոստոսի 30-ի N 974 - Ա որոշման

# ԷԿՈՍ

**Բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների,  
արտադրական ոլորտներում ազատ տնտեսական գոտու  
ստեղծում**

**Բիզնես պլան**

## Բովանդակություն

1	Տերմիններ և սահմանումներ	1
2	Հայաստանում ԱՏԳ ստեղծման նախադրյալները	3
2.1	Բլոկչեյն-տնտեսության նախադրյալները	3
2.2	Արտադրական ուղղության ստեղծման նախադրյալները	4
2.3	Հայաստանի Հանրապետության տարածքում ԱՏԳ ստեղծման նախադրյալները	5
3	Նախագծի էությունը և համառոտ նկարագրությունը	6
3.1	Նախագծի նախաձեռնությունը	6
3.2	ԱՏԳ նպատակները, խնդիրները և գործունեության ուղղությունները	7
4	ԱՏԳ-ի կազմակերպչական կառուցվածքը	10
4.1.1	ԱՏԳ կազմակերպիչը	11
4.1.2	Ակսելերատոր	13
4.1.3	Կրթական կլաստեր	14
4.1.4	Հետազոտական կլաստեր	15
4.1.5	Մայնինգ-կենտրոն	16
4.1.6	Լաբորատորիա	17
4.1.7	Ծառայություններ մատուցող ընկերություններ	18
5	Մարքեթինգային ռազմավարությունը և ԱՏԳ լոգոն	19
5.1	Մարքեթինգային ռազմավարությունը	19
5.2	ԱՏԳ լոգո	20
6	ԱՏԳ աշխարհագրությունը	21
7	ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	23
8	ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱԶԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԱՏԳ ՏԱՐԱԾՔՈՒՄ	25
9	ԱՏԳ օպերատորներին ներկայացվող պահանջները	26
10	Համագործակցությունը ԱՏԳ-ում	28
11	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆ	30
11.1	Արտահանման կանխատեսվող ծավալները, մլն ԱՄՆ դոլար	30

11.2	Նոր աշխատատեղերի կանխատեսվող քանակը	30
11.2.1	ԱՏԳ Կազմակերպչի կողմից ստեղծված աշխատատեղերի քանակը	31
11.3	Ներդրումների ընդհանուր ծավալը	31
11.3.1	ԱՏԳ օպերատորների ներգրավում	31
11.3.2	ԱՏԳ Կազմակերպչի ներդրումների ծավալը	32
11.4	Կանխատեսվող շահագործողների քանակ և նկարագրություն	32
11.5	Կանխատեսվող եկամուտ	32
11.6	Ներդրման և ֆինանսավորման ընդհանուր ծավալը	32
12	ԱՏԳ-ում պլանավորվող գործունեության տեսակները	33
13	ԱՏԳ ինֆրաստրուկտուրան	39

# 1 Տերմիններ և սահմանումներ

1. Կրիպտոակտիվ - թվային նշան (տոկեն), որն օգտագործվում է միջազգային շրջանառության մեջ որպես փոխանակման ունիվերսալ միջոց:
2. Մայնինգ – սեփական թվային նշանների (տոկենների) ստեղծումից տարբերվող գործունեություն, որն ուղղված է գործարքների բլոկների ռեեստրի (բլոկչեյնի) գործունեության ապահովմանը՝ այդպիսի ռեեստրում կատարված գործառնությունների մասին տեղեկություններ պարունակող նոր բլոկների ստեղծման միջոցով: Մայնինգ իրականացնող անձը դառնում է իր մայնինգի գործունեության արդյունքում առաջացած (ծեռք բերված) թվային նշանների (տոկենների) սեփականատեր, և կարող է ստանալ թվային նշաններ (տոկեններ)՝ որպես պարգևատրում բլոկչեյնի ապակենտրոնացված ցանցին (գործարքների բլոկների ռեեստր) աջակցելու համար: Կրիպտոարժույթի շրջանառության օպերատոր - ընկերություն, որը ինքնակարգավորման ռեժիմում աշխատող տեղեկատվական համակարգերի և (կամ) ծրագրային-տեխնիկական ամբողջությունների օգտագործման միջոցով, իր անունից և իր շահերից ելնելով իրականացնում է մի տեսակի թվային նշանների (տոկենների) փոխանակում մեկ այլ տեսակի թվային նշաններով (տոկեններով), դրանց գնում և վաճառք:
3. Կրիպտոհարթակի օպերատոր – ընկերություն, որը, տեղեկատվական համակարգի օգտագործման միջոցով, ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց հնարավորություն է ընձեռում միմյանց հետ և (կամ) կրիպտոհարթակի օպերատորի հետ իրականացնել հետևյալ գործարքները (գործառնությունները)՝
  - 1) Արժույթի կամ էլեկտրոնային դրամի դիմաց օտարել, ձեռք բերել թվային նշաններ /տոկեններ/,
  - 2) Փոխանակել մի տեսակի թվային նշանները /տոկենները/ մեկ այլ տեսակի թվային նշաններով /տոկեններով/:
4. Թվային նշանների /տոկենների/ տեղաբաշխում- իրավաբաղաքացիական գործարքների կամ այլ իրավաբանական նշանակության գործարքների կատարում, որոնք ուղղված են թվային նշանները /տոկենները/ այդպիսի թվային նշանները /տոկենները/ ԱՏԳ օպերատորի միջոցով ստեղծող անձի կողմից սահմանված պայմաններով իրենց առաջին սեփականատիրոջը հանձնելուն:
5. Կանոնակարգ – Ազատ տնտեսական գոտու օպերատորների գրանցման կարգի վերաբերյալ Կանոնակարգ:
6. Տրանզակցիայի բլոկների ռեեստր /բլոկչեյն/ - կառուցված է տեղեկատվության պաշտպանման կրիպտոգրաֆիկ մեթոդները, այդպիսի համակարգում կատարվող գործառնությունների մասին տեղեկատվությունով բլոկների հերթականությունը օգտագործող բաշխված ապակենտրոնացված տեղեկատվական համակարգում տրված ալգորիթմի հիման վրա:
7. Սմարթ-պայմանագիր – ծրագրային ծածկագիր, որը նախատեսված է տրանզակցիայի բլոկների ռեեստրում /բլոկչեյն/, այլ բաշխված տեղեկատվական համակարգում գործարքները կամ այլ իրավաբանական նշանակություն ունեցող գործարքները ավտոմատացված կերպով իրականացնելու և/կամ կատարելու գործառնության համար:
8. Թվային նշան /տոկեն/ - գրառում տրանզակցիաների բլոկների ռեեստրում /բլոկչեյն/, այլ բաշխված տեղեկատվական համակարգում, որը վավերացնում է թվային նշանի

/տոկենի/ սեփականատիրոջ իրավունքները քաղաքացիական իրավունքների օբյեկտների նկատմամբ և/կամ հանդիսանում է կրիպտոակտիվ:


## 2 Հայաստանում ԱՏԳ ստեղծման նախադրյալները

### 2.1 Բլոկչեյն-տնտեսության նախադրյալները

Բաշխված ռեսուրսների (բլոկչեյն) տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսությունը վերջնականապես մտել է բարձր տեխնոլոգիաների («հայ-թեք») ընդհանուր տնտեսության մեջ:

«Թվային ակտիվները» ևս աստիճանաբար մտնում են աշխարհի շատ տնտեսությունների իրավական դաշտ: Չնայած, որ կոնկրետ ռեժիմը և կարգավորող գործիքակազմը կարող են տարբեր լինել, տնտեսապես և քաղաքականապես կայուն իրավասությունների մեծամասնությունը աշխատում են կամ այս կամ այն չափով պատրաստվում են աշխատել թվային ակտիվներով:

Բլոկչեյն տեխնոլոգիան հանդիսանում է աշխարհի ամենաարագ աճող և հեռանկարային բարձր տեխնոլոգիական սեկտորներից մեկը: Բլոկչեյն տեխնոլոգիան ամբողջ աշխարհում մասսայականորեն ներդրվում է պետական ծառայությունների ոլորտում, էներգետիկայի, ֆինանսների և այլ ճյուղերում: ICO շուկայում դա առաջացրեց կապիտալի շեշտակի ներհոսք, ձևավորեց բարձր մարժա, որի չափը կազմում է տարեկան 1000%:



Բլոկչեյնի տեխնոլոգիայի հիման վրա պրոդուկտներ զարգացնող ընկերությունների ճնշող մեծամասնությունը համագործակցում են միմյանց հետ և իրենց կոնտրագենտների հետ՝ վճարելով թվային ակտիվներով (կամ գլոբալ կոնտեքստի կամ տեղական կոնտեքստի, ինչպիսիք են օրինակ այդ ընկերությունների կողմից ստեղծված նախագծերի «տոկենները» կամ «ժետոնները»): Այդպիսի վճարային միջավայրը (այդ թվում նաև նախագծերի զարգացման համար միջոցների ներգրավման դեպքում)

համարվում է առավել ընդունելի այս՝ զարգացվածության մակարդակով նոր տնտեսության ձեռնարկատերերի և մասնակիցների մեծամասնության համար:

Բլոկչեյնի տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ստեղծել նոր և էականորեն մոդիֆիկացնել առկա բիզնես-մոդելները և պետական կառավարման մոդելները:

Բլոկչեյնի տեխնոլոգիայի ունիկալությունը և ունիվերսալությունը թույլ են տալիս այն օգտագործել առօրյա կյանքի բոլոր հնարավոր ոլորտներում՝ բժշկության, մանրածախ առևտրի, ֆինանսական ծառայությունների, կրթության, սեփականության ռեգիստրների, պետական ծառայությունների և շատ այլ ոլորտներում, հեշտացնելով և արագացնելով ամենօրյա խնդիրների իրագործումը և արդյունավետությունն ու թափանցիկությունն մտցնելով գործընթացներում:

Աղյուսակ. Վերնագիր

Ընկերություններ	Նախագծի նկարագրություն
Walmart, Nestle, Unilever, Dole (ԱՄՆ)	Արտադրանքի մանրածախ առևտրով /պրոդուկտային ռիթեյլ/ զբաղվող ընկերությունները տեսնում են Blockchain-ի ներուժը իրենց մատակարարումների շղթան պարզեցնելու մեջ՝ այնպիսի կարևոր տեղեկատվության ստացման գործընթացների ավտոմատացման միջոցով, ինչպիսիք են՝ ապրանքների որակը, ջերմաստիճանը, խոնավությունը փոխադրման ընթացքում, մատակարարման և պիտանելիության ժամկետները, ինչպես նաև անվտանգությունը հաստատող անհրաժեշտ սերտիֆիկատների և փաստաթղթերի առկայությունը :
Boeing(ԱՄՆ)	Boeing ընկերության կողմից առաջարկվել է հեղափոխական տեխնոլոգիա, որն իր մեջ ներառում է IoT, Blockchain և ամպային հաշվարկների տեխնոլոգիա: Այս սինթետիկ տեխնոլոգիայի օգնությամբ նախատեսվում է ապահովել ինքնաթիռների սովորական սպասարկման գործընթացը, թռիչքների արդյունավետության մոնիտորինգը, օդանավի համակարգերի վերահսկումը, ընթացիկ և կապիտալ վերանորոգումը:
ԱՄՆ փոստային ծառայություն	Դիտարկում է բլոկչեյնի ներդրումը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ծանրոցների նույնականացումը, հաճախորդների, գործընկերների և կապալառուների կոորդինացումը: Ներկա պահին իրականացվում է ներդրման առաջին փուլը՝ հաշիվ ապրանքագրերը ավտոմատ կերպով վճարվում են բեռը ստանալու պահին:
Մ.Վիդեո և Ինայբանկ (ՌԴ)	Մատակարարումները, որոնք համակարգ է ներբեռնում Մ-Վիդեո-ն, կողավորվում են և ստուգվում են Ինայբանկ Ֆակտորինգ-ի տվյալների հետ մատակարարների հետագա ֆինանսավորման համար:
S7 և AlfaBank(ՌԴ)	Բլոկչեյն-հարթակի ներդրում ավիատոմսերի գնման գործընթացների ավտոմատացման համար:

## 2.2 Արտադրական ուղղության ստեղծման նախադրյալները

Հաշվի առնելով աշխարհում տիրող իրավիճակը, ՌԴ-ի ներկա սահմանափակումները, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման, երկրի ներդրումային գրավչության բարձրացման, արտահանման ուղղվածություն ունեցող գործունեության խթանման, արտահանման ծավալների ավելացման, նոր աշխատատեղերի ստեղծման և կայուն տնտեսական զարգացման խթանման նպատակով ցանկանում ենք ընդլայնել Էկոս ազատ տնտեսական գոտուն տրված գործունեության ոլորտները, և թույլ տալ տվյալ ազատ տնտեսական գոտում կազմակերպել նաև արտադրություն:

Ներկայիս իրավիճակում, երբ ՌԴ արտադրողների համար հումքի ներմուծումը բարդացել է, ՀՀ-ում գործող արտադրական կազմակերպությունները չեն ունենա հումքի ներմուծման և արտահանման խնդիր: Հաշվի առնելով, որ հարևան բոլոր երկրները փորձում են օգտվել տվյալ իրավիճակից, կարևոր է, որ ՀՀ արտադրող

կազմակերպությունները, կարողանան օգտվել ազատ տնտեսական գոտիների տված արտոնություններից:

Պլանավորվում է ներգրավել ներդրումներ հիմնականում արդյունաբերական ապրանքների արտադրություններ հիմնելու նպատակով:

## 2.3 Հայաստանի Հանրապետության տարածքում ԱՏԳ ստեղծման

### նախադրյալները

Հայաստանի Հանրապետությունը ընդունում է տնտեսության կառուցվածքում բարձր տեխնոլոգիական ճյուղերի դինամիկ զարգացման անհրաժեշտությունը:

Ի տարբերություն այլ երկրների, Հայաստանն ունի մի շարք առավելություններ ռուսալեզու գոտու երկրներից ֆինանսական և կադրային ռեսուրսներ ներգրավելու համար՝

1)Բարենպաստ հարկային միջավայրը, այդ թվում նաև IT ընկերությունների համար;

2)Ենթակառուցվածքային հագեցվածությունը;

3)ԱՊՀ ռուսալեզու գոտուն մոտ գտնվելը.

3.1)Հաշվապահական հաշվառման համակարգ,

3.2)Ռուսալեզու մասնագետներ,

3.3)Առանց վիզայի ռեժիմ;

4)Բարձր որակավորում ունեցող մասնագետների առկայությունը, այդ թվում, ՏՏ ոլորտի դասընթացների վերապատրաստում անցած, ովքեր ազատ տիրապետում են անգլերեն լեզվին:

Հավասարակշռված մոտեցումը, որ կարող է համաձայնեցնել բոլոր կողմերի շահերը (բլոկչեյն-ձեռնարկատերերի, բլոկչեյն-մշակողների, միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության հարկային և այլ իրավասու մարմինների, ներդրողների և այլն), ունի երկրում կլաստեր (էկոհամակարգ) ստեղծելու, զարգացնելու և երկրի տարածք բլոկչեյն-նախագծեր ներգրավելու բարձր ներուժ, մի շարք դրական տնտեսական (աշխատատեղերի ստեղծում, լրացուցիչ մուտքեր բյուջեի թիվս հարկային հատկացումների) և որակական (բարձր որակավորում ունեցող երիտասարդության արտահոսքի նվազեցում, համաշխարհային ասպարեզում դրական իմիջի ամրապնդում, Սփյուռքի մոտիվացիա, գիտության և կրթության զարգացում) առավելություններ:



### 3 Նախագծի էությունը և համառոտ նկարագրությունը

#### 3.1 Նախագծի նախաձեռնությունը

Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի ՏՏ-սեկտորը ստացել է լուրջ պետական աջակցություն և դարձել է երկրի տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղություններից մեկը: Հայաստանի Հանրապետությունում ծրագրային ապահովման, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների մշակման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, կիանոգենի ազգային տնտեսության գլոբալ մրցունակության բարձրացմանը:

Հայաստանը միջազգային շուկայից ներդրումային ռեսուրսներ, բիզնես և տաղանդներ ներգրավելու համար ունի մի շարք առավելություններ, որոնք ներառում են (բայց չեն սահմանափակվում)`

- 1) Տեխնիկական և մասնագիտական կրթության որակի բարձր մակարդակը;
- 2) Գիտահետազոտական բազայի առկայությունը;
- 3) Միջազգային կապերի առկայությունը, այդ թվում սփյուռքի ներկայացուցիչները աշխարհի տարբեր երկրներում;
- 4) Տեխնոլոգիական ընկերությունների համար բարենպաստ հարկային պայմանները;
- 5) Շահավետ աշխարհագրական դիրքը՝ այլ տեխնոլոգիապես զարգացած շրջանների համեմատ:

Սույն նախագծի նպատակն է երկրում նպաստավոր պայմաններ ստեղծել բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արտահանման ուղղվածություն ունեցող ընկերությունների զարգացման համար, այդ թվում՝ ձևավորել բլոկչեյնի տեխնոլոգիաների հիման վրա արտադրանքներ ստեղծող ընկերությունների ինդուստրիա, ինչպես նաև ներգրավել համաշխարհային մակարդակով բարձր որակավորում ունեցող մասնագետներ և փորձագետներ, կենտրոնացնել կադրային, գիտաարտադրական և ֆինանսաներդրումային պոտենցիալը, որոնք անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական իրավիճակի կայուն զարգացման համար:

Նախագծի իրագործման շրջանակներում առաջարկվում է ստեղծել բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների կլաստերների փոխներգործության ունիկալ համակարգ, որի համանմանը չկա աշխարհում, և ի վիճակի է Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովել ընկերությունների կայուն զարգացումը բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:

«ԷԿՈՍ» ՓԲԸ հիման վրա բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մասնավոր նախաձեռնությամբ կգրանցվի ազատ տնտեսական գոտի (ԱՏԳ):

Նախագիծը կիրականացվի 25 տարվա ընթացքում: Ենթադրվում է երկու տեսակի մասնակիցների մուտք ԱՏԳ՝

1. ԱՏԳ էկոհամակարգի մաս կազմող մասնակիցներ, որոնց գործունեությունն ապահովում է բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների զարգացումը և բիզնես պլանի ցուցանիշների ձեռքբերումը. Կրթական կլաստերի ձեռնարկություններ, բիզնես-

ակսելերատոր, վենչուրային ֆոնդ, գիտահետազոտական լաբորատորիաներ, սերտիֆիկացման և արտոնագրման կենտրոններ, գործունեության իրավական, հաշվապահական և հարկային գործառնությունների ուղղորդման ծառայություններ մատուցող ընկերություններ, մայնինգային ֆերմաներ, ֆինանսական ծառայություններ և գործիքներ տրամադրող ընկերություններ և այլն);

2. ԱՏԳ շրջանակներում տնտեսական գործունեությամբ զբաղվող մասնակիցներ, բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններ, այդ թվում ստարտափեր: Տեխնոլոգիական ստարտափերը կգրանցվեն որպես ԱՏԳ օպերատորներ:

ԱՏԳ կազմակերպիչը կիրականացնի նաև հսկողական և ստուգիչ գործառնություններ ԱՏԳ կանոնակարգի հիման վրա (ԱՏԳ մասնակիցների հետ պայմանագրի հավելված):

Խոշոր ներդրումային նախագծերի իրագործումը և նորարարական /ինովացիոն/ ընկերությունների քանակի ավելացումը Հայաստանի Հանրապետության տարածքում կհանգեցնեն ծառայություններ մատուցող տեղական ընկերությունների ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճին, որոնք պետք է պատրաստ լինեն նոր տեսակի ծառայությունների տրամադրմանը և նոր մասնագիտական կոմպետենցիաների զարգացմանը, ինչպիսիք են՝

- 1) Ընկերության ընթացիկ գործունեության գործառնական /օպերացիոն աջակցություն;
- 2) Իրավաբանական և հաշվապահական աջակցություն;
- 3) Մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանություն;
- 4) Ծրագրային ապահովման մշակման և փորձարկման ծառայություններ;
- 5) Մարքեթինգային և գովազդային ծառայություններ, մեդիա-կոնտենտի արտադրություն;
- 6) Դիզայն և 3D նախագծում;
- 7) Խորհրդատվական ծառայություններ, կադրերի փնտրում, հավաքագրում և պատրաստում;
- 8) Աշխատատեղերի և գրասենյակների վարձույթ և սպասարկում:

### **3.2 ԱՏԳ նպատակները, խնդիրները և գործունեության ուղղությունները**

ԱՏԳ ստեղծման նպատակներն են՝ ստեղծել առավել բարենպաստ պայմաններ Հայաստանի Հանրապետության տնտեսության առանցքային ճյուղերի ընկերությունների բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման ծավալների աճի մրցունակության բարձրացման համար, ներգրավել բարձր որակավորում ունեցող մասնագետներին, փորձագետներին և բարձր տեխնոլոգիաների բնագավառի ձեռնարկատերերին, ինչպես նաև ներգրավել հայրենական և արտասահմանյան ներդրումներ՝ բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ինվեստիցիոն նախագծերի, կրթական և Հայաստանի Հանրապետության տարածքների սոցիալական զարգացման այլ նախագծերի իրագործման նպատակով:

Դրված նպատակներին հասնելու համար ԱՏԳ գործունեության շրջանակներում պետք է իրագործվեն հետևյալ խնդիրները՝

- 1) Ստեղծվեն բարձր տեխնոլոգիական և IT ընկերությունների կլաստերներ, որոնց կազմի մեջ մտնում են գիտահետազոտական կազմակերպությունները և լաբորատորիաները, որոնք իրականացնում են արտադրանքների նոր տեսակների մշակում բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, ինչպես նաև մասնագիտացված կազմակերպությունները, որոնց գործունեությունն ուղղված է նոր շուկայական նիշաների փնտրմանը, համաշխարհային շուկաներում կլաստերի արտադրանքի առաջխաղացմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը;
- 2) Ստեղծվի ընկերությունների նոր ինդուստրիա, որոնք արտադրանքներ են ստեղծում բլոկչեյն տեխնոլոգիաների հիման վրա, ներառյալ համաշխարհային մակարդակով մրցունակ նոր տեսակի արտադրանքի մշակման և տեխնոլոգիական կոմպետենցիաների մասնագիտացված կենտրոնների ստեղծումը;
- 3) Ստեղծվի կրթական կլաստեր, որը կապահովի բարձր տեխնոլոգիաների բնագավառում նոր ճյուղերի և ընկերությունների զարգացման համար անհրաժեշտ կադրերի ժամանակին մասնագիտական պատրաստումը;
- 4) Ստեղծվի ինժեներական և տեխնոլոգիական ինֆրաստրուկտուրա, որը կապահովի ձեռնարկությունների կայուն և դինամիկ զարգացումը բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում;
- 5) Ստեղծվի ԱՏԳ կառավարման արդյունավետ կազմակերպչական կառուցվածքը, որը կարող է ապահովել ԱՏԳ գործունեության ուղղություններով դրված նպատակներին և խնդիրներին հասնելը:

ԱՏԳ գործունեության ուղղություններն են՝

- 1) Բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների, բարձր տեխնոլոգիական արտադրանքի այլ տեսակների, բարձր և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների արտահանում;
- 2) տեխնոլոգիական ինֆրաստրուկտուրաների զարգացման նախագծերի իրականացման համար հայրենական և օտարերկրյա ներդրումների ներգրավման օժանդակում, բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում նոր ստարտափ-ընկերությունների գեներացիա, Հայաստանի Հանրապետության տարածքներում կրթական և այլ սոցիալական զարգացման նախագծերի իրականացում;
- 3) տեխնոլոգիական գործընկերությունների ստեղծման և զարգացման աջակցություն, մասնակցություն բարձր տեխնոլոգիաների ոլորտում միջազգային գիտահետազոտական կոնսորցիումներին՝ գիտահետազոտական բազայի և ինֆրաստրուկտուրայի օբյեկտների ձևավորման նպատակով, որոնք անհրաժեշտ են համաշխարհային շուկաներում մրցունակ արտադրանքի նոր տեսակների ստեղծման համար;
- 4) աջակցություն տեխնոլոգիական ինֆրաստրուկտուրայի օբյեկտների ստեղծման և կառավարման նախագծերի իրագործմանը, որն անհրաժեշտ է բլոկչեյն տեխնոլոգիաների ոլորտում գործող ձեռնարկությունների զարգացման համար;

- 5) ազգային տնտեսության ինովացիոն զարգացման կադրային ապահովման աջակցություն, կրթության զարգացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում;
- 6) կրիտիկական կարևոր տեխնոլոգիաների բնագավառում գիտական ներուժի, գույքային և տեխնիկական բազայի ձևավորման և զարգացման աջակցություն, որոնք անհրաժեշտ են բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրանքների կայուն զարգացման համար, այդ թվում նաև կրիպտոգրաֆիկ հաշվարկների, մեքենայական ուսուցման, նույնականացման համակարգերի և այլնի համար;
- 7) ինովացիոն գործունեությունը խթանող ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորում, այդ թվում նաև վենչուրային ֆինանսավորման համակարգի զարգացման աջակցություն, ստարտափ-շարժման զարգացում:

2018 թվականին Հրազդան ԶԷԿ-ի հարակից շրջանում սկսվեցին ազատ տնտեսական գոտու ստեղծման համար տարածքի նախապատրաստման աշխատանքները: Ազատ տնտեսական գոտին ոչ միայն կլուծի շրջանի սոցիալ-տնտեսական խնդիրները, այլև կնպաստի կապիտալի ներհոսքին, տարածքային զարգացմանը:

Հայաստանում ազատ տնտեսական գոտին գործի դնելը կնպաստի ներդրումների ներգրավմանը, միջազգային կազմակերպությունների ներգրավմանը, արտահանման խթանմանը, միջազգային շուկայում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ճանաչմանը և տարածմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Ազատ տնտեսական գոտին գործի դնելը, այդ թվում Կոտայքի մարզում, կնպաստի հավասարակշռված տարածաշրջանային զարգացմանը, ազգային տնտեսության զլոբալ մրցունակության բարձրացմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, երկրի ներդրումային գրավչության բարձրացմանը, արտահանման ավելացմանը, ինչպես նաև երկրի միջազգային քաղաքականության մեջ ձեռքբերումների ավելի արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ երկրի կայուն տնտեսական զարգացման:

Նախագծի իրագործման համար ստեղծվել է «Էկոս» ՓԲԸ-ն:

## 4 USԳ-ի կազմակերպչական կառուցվածքը

Առաջարկվում է ստեղծել եռաստիճան էկոհամակարգ, որի մեջ կներառվեն՝

- 1) USԳ կազմակերպիչը՝ «Էկոս» ՓԲԸ-ն.
- 2) Ինֆրաստրուկտուրայի մաս կազմող USԳ մասնակիցները՝
  1. Ակսելերատոր – մասնագիտացված ընկերություն, որն իրականացնում է վաճառահանման միջազգային շուկաներ դուրս գալու պոտենցիալ ունեցող ստարտափ-ընկերությունների ընտրում և հետագա բիզնես-աքսելերացիա (բիզնեսի արագ սկսում և զարգացում) բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում; իրականացնում է նախագծերի տեխնոլոգիական և ֆինանսական աջակցություն:
  2. Կրթական կլաստեր (կամ Blockchain Open University) – բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում նաև բլոկչեյն տեխնոլոգիաների բնագավառի ընկերությունների համար կադրերի մասնագիտական պատրաստման և հավաստագրման ծրագրեր իրականացնող կրթական կազմակերպությունների ցանց; իրականացնում է նաև կրթական ծրագրերի արտահանում և բարձր տեխնոլոգիաների և բլոկչեյնի ոլորտում կոմպետենցիաների համաշխարհային կենտրոնների հետ մասնագիտական կապերի զարգացում;
  3. Հետազոտական կլաստեր – բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում նաև բլոկչեյն տեխնոլոգիաների բնագավառում տեխնոլոգիական բազայի կատարելագործմանը և նոր արտադրատեսակների ստեղծմանն ուղղված ֆունդամենտալ և կիրառական հետազոտություններ իրականացնող գիտահետազոտական լաբորատորիաների, սերտիֆիկացման կենտրոնների, կոմպետենցիաների մասնագիտացված կենտրոնների ցանց; USԳ ռեզիդենտ-ընկերությունների և արտաքին կազմակերպությունների պատվերով իրականացնում է կիրառական գիտահետազոտական մշակումներ:
  4. Դրամապանակ – դրամապանակի ռեեստրում գրանցված ընկերություններին տրամադրում է կրիպտոակտիվներով գործարքների և կրիպտոակտիվների մնացորդների հաշվառման և վերահսկման համար ծրագրային ապահովում:
  5. Մայնինգ ֆերմա – գործարքների բլոկների ռեեստրի (բլոկչեյնի) գործունեության ապահովում, հոսթինգի ծառայություններ:
  6. Marketplace – տեղեկատվական համակարգի օգտագործման միջոցով ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց հնարավորություն է ընձեռում միմյանց հետ և (կամ) կրիպտոհարթակի օպերատորի հետ իրականացնել կրիպտոակտիվների փոխանակման, առքի/վաճառքի գործարքների:
  7. Նույնականացման կենտրոն – իրականացնում է անցկացվող միջոցառումների մասնակիցների նույնականացում:
  8. Ռեյտինգային կենտրոն – իրականացնում է USԳ-ի կազմի մեջ մտնող ընկերությունների գործունեության գնահատում՝ USԳ գործունեության արդյունավետության գնահատման և մոնիտորինգի հաստատված չափանիշների համաձայն:
  9. Ծառայություններ մատուցող ընկերություններ – մասնագիտացված կազմակերպություններ, որոնք ՀՀ ոչ ռեզիդենտ ընկերությունների համար, որոնք իրականացնում են նախատեսված գործունեության մեկ կամ մի քանի տեսակներ և/կամ USԳ օպերատորների համար մատուցում են մի շարք ծառայություններ, ներառյալ

իրավաբանական, հաշվապահական և հարկային աջակցման ծառայությունները, գովազդի կազմակերպման, մարկետինգի, PR-ի և առաջխաղացման ծառայությունները, ինչպես նաև այլ տեսակի ծառայությունները:

10. Ներդրումային ֆոնդ – իրավաբանական անձ կամ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարման պայմանագրերի կամ նմանատիպ այլ պայմանագրերի հիման վրա ստեղծված ակտիվների ամբողջություն, որոնք ստեղծվել են և (կամ) գործում են (օգտագործվում են) հետևյալ նպատակով կամ հետևյալ հիմնական նպատակներից որևէ մեկով — ներդրողներին ապահովել արժեթղթերի և (կամ) այլ ակտիվների, այդ թվում թվային ակտիվների, տոկեճների և այլ թվային գործիքների մեջ կոլեկտիվ ներդրումների միջոցով, միասնական ներդրումային քաղաքականության շրջանակներում ներդրողներից հավաքագրված գումարների վերադարձելիություն՝ կապիտալի, շահաբաժինների և (կամ) այլ ֆինանսական եկամտի ավելացման ձևով՝ նրանց կողմից իրավաբանական անձի կապիտալում (ակտիվներում) կատարված ներդրումներին համապատասխան, և կախված այդ ներդրումների կառավարման արդյունքներից:

ԱՏԳ մասնակիցներ– ԱՏԳ-ի գործունեության մասնագիտացման (ռազմավարության) պրոֆիլին համապատասխանող ընկերություններ, որոնք իրականացնում են բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում /այդ թվում նաև բաշխված ռեսսուրսների տեխնոլոգիաների (բլոկչեյն) հիման վրա ստեղծվող/ բարձր տեխնոլոգիական արտադրանքի ստեղծման և միջազգային շուկաներում առաջնորդական գործունեություն:

Էկոհամակարգի բաղադրիչները կկատարեն հետևյալ գործառույթները՝

#### 4.1.1 ԱՏԳ կազմակերպիչը

Ստեղծվող էկոհամակարգի շրջանակներում նախատեսվում է ԱՏԳ Կազմակերպիչի կողմից հետևյալ վերահսկողական գործառույթների իրականացումը՝

Ստուգող (աուդիտոր) կազմակերպության աշխատանքի կարգն ու պատասխանատվությունը:

«մայներների» հաշվառման և ռեեստրի վարման կարգը:

Տեխնոլոգիական ինֆրաստրուկտուրային որոշումների հաստատման կարգը (դրամապանակ, marketplace, նույնականացման կենտրոն):

Ինֆրաստրուկտուրայի մասնակիցների կողմից հաշվետվության ներկայացման կարգը (դրամապանակ, marketplace, աուդիտոր, ռեյտինգային գործակալություն):

ԱՏԳ մասնակիցների հետ պայմանագրերի կնքման և դադարեցման կարգը:

Բացի այդ, ԱՏԳ Կազմակերպիչը Հայաստանի Հանրապետության վերադաս իրավասու մարմնին կներկայացնի համաձայնեցված ձևաչափով հաշվետվություններ:

ԱՏԳ Կազմակերպիչի խնդիրները ներառում են նաև ԱՏԳ-ի կառավարման համակարգի ստեղծման և զարգացման գործառույթները, մասնավորապես՝

- 1) ԱՏԳ տարածքում գործող կազմակերպությունների կազմակերպչական կառուցվածքի և կառավարման համակարգի մշակումը, որոնք այդ թվում նաև

կարող են նպատակային ձևով համախմբված լինել մասնագիտացված կլաստերների մեջ;

- 2) ԱՏԳ-ի առաջխաղացման ռազմավարության մշակում և իրականացում՝ ԱՏԳ ռազմավարության իրականացման և բիզնես պլանի ցուցանիշներին հասնելու համար անհրաժեշտ բարձր որակավորում ունեցող մասնագետների, ներդրումային ռեսուրսների ներգրավման և մասնագիտական կոնտակտների ցանցի ընդլայնման նպատակով;
- 3) ԱՏԳ մասնակիցների համագործակցության կազմակերպում և փոխգործակցության կոորդինացում՝ ԱՏԳ տարածքում գործող բարձր տեխնոլոգիական ճյուղերի և կլաստերների զարգացման համատեղ նախագծերի իրականացման շրջանակներում;
- 4) Իշխանությունների ներկայացուցիչների հետ փոխգործակցության և կանոնավոր հաղորդակցության համակարգի կազմակերպում, Հայաստանի Հանրապետության կառավարությանը առաջարկություններ՝ թվային ակտիվների ոլորտում պետական կարգավորման արդյունավետ համակարգի ապահովման և զարգացման հարցերի վերաբերյալ:

ԱՏԳ նոր արտադրական ֆունկցիոնալով գործարկման համար էկոս ԱՏԳ կազմակերպիչը կապահովի ԱՏԳ-ին ներկայացվող պահանջները, որոնք են՝

- 1) բեռնափոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցների ավտոկայանատեղի
- 2) Կառավարության հաստատած սահմանազծին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան սահմանով սահմանազատվածություն.
- 3) մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային հսկողություն և մաքսային գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններով ու տեխնիկական միջոցներով ապահովվածություն.
- 4) տարածքի անվտանգության, առաջնային բուժօգնության և հակահրդեհային համակարգերով ապահովվածություն.
- 5) անխափան ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման, աղբահանության և կապի միջոցների (հեռախոսային կապի և ինտերնետի) ապահովվածություն.
- 6) սանիտարահիգիենիկ նորմերի պահանջների պահպանման համապատասխան միջոցներով ապահովվածություն.
- 7) կարանտինային սպասարկման տարածքի առկայություն.
- 8) ապրանքների պահպանության համար նյութատեխնիկական սարքավորումներով, ինչպես նաև բեռնման, բեռնաթափման և տրանսպորտային միջոցների, պահեստային տնտեսության համար անհրաժեշտ սարքավորումներով և այլ միջոցներով ապահովվածություն:

ԱՏԳ-ի բիզնես պլանի ցուցանիշներին հասնելու ապահովման նպատակով ստեղծվող էկոհամակարգի շրջանակներում իրականացվում է մասնագիտացված կլաստերների՝ ԱՏԳ Օպերատորների կանոնավոր փոխգործակցության ծրագիր:

Կառուցվածքում կներառվեն նաև ստորև թվարկված ԱՏԳ Օպերատորները:

#### 4.1.2 Ակսելերատոր

Ստեղծվող էկոհամակարգի շրջանակներում կստեղծվի մասնագիտացված ընկերություն կամ ընկերությունների խումբ, որն իրականացնում է վաճառահանման միջազգային շուկաներ դուրս գալու պոտենցիալ ունեցող ստարտափ-ընկերությունների ընտրում և հետագա բիզնես-ակսելերացիա (բիզնեսի արագ սկսում և զարգացում) բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, ներառյալ բլոկչեյնը: Գործունեության նշված ուղղվածության շրջանակներում Ակսելերատորն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 1) Արտահանման գնահատման կազմակերպում և վաճառահանման համաշխարհային շուկաներ դուրս գալու պոտենցիալ ունեցող և ԱՏԳ Կանոնակարգի պահանջներին համապատասխանող բարձր տեխնոլոգիական ընկերությունների հավաքագրում;
- 2) Ակսելերացիոն ծրագրերի կազմակերպում և իրականացում՝ ստարտափ-ընկերությունների նոր բիզնես-նախագծերի գործարկման արագացման նպատակով, նախագծերի տեխնոլոգիական, խորհրդատվական և ֆինանսական աջակցության տրամադրում;
- 3) Ստարտափ-ընկերությունների գործունեության արդյունավետության և Ակսելերատորի բիզնես-նախագծերի զարգացման առանցքային ցուցանիշների իրականացման կանոնավոր մոնիտորինգի անցկացում, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ փորձագիտական աջակցության և խորհրդատվությունների կազմակերպում;
- 4) Աշխատանքային տարածքների տրամադրում (գրասենյակային տարածքներ, քոփորքինգներ, բանակցային և շնորհանդեսային /պրեզենտացիոն/ ռեսուրսներ և այլն);
- 5) Միջազգային փորձաքննության ներգրավում գործարար կապերի զարգացման և Ակսելերատորի ընկերությունների միջազգային շուկաներ ելքը ապահովելու համար;
- 6) Ներդրողների և պոտենցիալ գործընկերների համար մարքեթինգային միջոցառումների, ճանապարհային ցուցադրումների /ռուղշոու/ և տպավորիչ ելույթների /փիչ/ կազմակերպում՝ ներդրումների ներգրավման և Ակսելերատորի ընկերությունների միջազգային շուկաներում առաջխաղացմանն աջակցելու նպատակով:

#### Արդյունքը՝

Ամբողջ աշխարհից հեռանկարային ստարտափերի ներգրավում, խոշոր տեխնոլոգիական ընկերությունների ստեղծում և դրանց դուրս բերում համաշխարհային շուկա;

Կապիտալի ներգրավում, վենչուրային համակարգի զարգացում արտաքին ֆոնդերի, համալսարանների և այլ ակսելերատորների հետ համագործակցության շնորհիվ;

Հայաստանի Հանրապետության դիրքավորում որպես առաջադեմ զարգացող երկիր (ոչ թե ռեսուրսային բազա):



### 4.1.3 Կրթական կլաստեր

ԱՏԳ կայուն աճի համար հիմնական ռեսուրսներից մեկը ստեղծվող Կրթական կլաստերն է, որը ներառում է կրթական կազմակերպությունների ցանց, ներառյալ Blockchain Open University-ն, որոնք իրականացնում են բարձր տեխնոլոգիաների, IT, բլոկչեյնի և այլ առաջադեմ տեխնոլոգիական ուղղությունների ոլորտի մասնագետների լրացուցիչ կրթության, մասնագիտական պատրաստման և հավաստագրման ծրագրեր: Կրթական ծրագրերի ցանկը և բովանդակությունը, կրթական կլաստերի հիման վրա վերապատրաստված մասնագետների կոմպետենցիաներին ներկայացվող պահանջները համաձայնեցվում են ԱՏԳ-ի մասնակից ընկերությունների և տեխնոլոգիական գործընկերների հետ: Գործունեության նշված ուղղվածության շրջանակներում Կրթական կլաստերի ընկերություններն իրականացնում են հետևյալ գործառույթները՝

- 1) Բարձր տեխնոլոգիաների բնագավառի համաշխարհային առաջատարների և բլոկչեյն տեխնոլոգիաների վրա հիմնված լուծումների առաջատար մշակողների հետ համատեղ լրացուցիչ կրթության կիրառական ուսուցողական ծրագրերի մշակում և իրականացում;
- 2) Բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների, այդ թվում նաև բլոկչեյն տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրանքներ մշակողների, հավաստագրման ծրագրերի մշակում և իրականացում;
- 3) Փոխգործակցության ստեղծում գործող կրթական համակարգերի՝ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների, տաղանդավոր երեխաների և պատանիների դպրոցների հետ, օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ, հեռակա ուսուցման համակարգերի մշակում, համաշխարհային ճանաչում ունեցող ուսուցիչների հրավիրում Հայաստանի Հանրապետություն, օժանդակություն Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններին՝ դպրոցականների, ուսանողների և ասպիրանտների ընտրության հարցում;
- 4) Հայաստանի Հանրապետությունում բլոկչեյն տեխնոլոգիաների ուղղությամբ մասնագիտական կրթության համակարգի զարգացման ինտեգրացում և օժանդակություն, ներառյալ դպրոցական, միջնակարգ և բարձրագույն կրթության համար ուսուցողական ծրագրերի զարգացումը;
- 5) Միջազգային փորձագիտական և մեթոդական միջոցառումների, ֆորումների, ամառային /ձմեռային դպրոցների, գիտելիքների յուրացման խորացված դասընթացների, մեթոդական ծրագրերի, դասընթացավարների համար թրեյնինգների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության՝ որպես նոր միջազգային տեխնոլոգիական առաջատարի դրական կերպար ձևավորող այլ միջոցառումների անցկացում;
- 6) Կրթական ծրագրերի արտահանման կազմակերպում և մասնագիտական կապերի զարգացում բարձր տեխնոլոգիաների և բլոկչեյնի ոլորտի համաշխարհային մակարդակի համալսարանների, կոմպետենցիաների համաշխարհային կենտրոնների հետ;
- 7) ԱՏԳ-ի զարգացման Ռազմավարության և ռազմավարության շրջանակներում ԱՏԳ-ի Օպերատորի գործունեության արդյունքների անկախ փորձաքննության

կազմակերպում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածք թվային ակտիվների միջոցով ներդրումներ ներգրավող նախագծեր փնտրելուն և ներգրավելուն, ինչպես նաև ռիսկայնության մակարդակի և հեռանկարայնության անկախ փորձաքննության անցկացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում;

- 8) Իշխանությունների ներկայացուցիչների հետ փոխգործակցության և կանոնավոր հաղորդակցության համակարգի կազմակերպում, Հայաստանի Հանրապետության կառավարությանը առաջարկություններ՝ թվային ակտիվների ոլորտում պետական կարգավորման արդյունավետ համակարգի ապահովման և զարգացման հարցերի վերաբերյալ:

### **Արդյունքը՝**

Կադրերի պատրաստում՝ արտահանման ուղղվածություն ունեցող բարձր տեխնոլոգիական ընկերությունների կայուն զարգացումն ապահովելու համար;

Ակտիվ աջակցություն ժամանակակից կրթական համակարգի զարգացմանը;

Երկրում տեխնոլոգիական զարգացման ընդհանուր մակարդակի բարձրացում;

Միջազգային փորձաքննության և փորձի ներգրավում՝ Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիաների ճյուղերի զարգացման համար;

Արտահանման եկամուտների աճ՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում համատեղ միջազգային կրթական ծրագրերի իրականացման և բլոկչեյն տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրանքի մշակման արդյունքում:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար պրակտիկ փորձի արդյունավետ փոխանակման կազմակերպման և լավագույն համաշխարհային փորձերի ներդրման նպատակով բարձր տեխնոլոգիաների բնագավառում /այդ թվում՝ բաշխված ռեսուրսների տեխնոլոգիաների (բլոկչեյն)/ թվային ակտիվների և մայնինգի, ներդրումային ֆոնդերի և մասնավոր ներդրողների, հաջողակ ձեռնարկատերերի, տեխնոլոգիական հարթակների ստեղծողների, աշխարհի տարբեր երկրներում թվային տնտեսության զարգացման ծրագրերի լիդերների մասնագետների միջազգային փորձագիտական ցանցի ձևավորում:

Ամբողջ աշխարհից հեռանկարային ստարտափերի ներգրավում, խոշոր տեխնոլոգիական ընկերությունների ստեղծում և դրանց դուրս բերում համաշխարհային շուկա:

Կապիտալի ներգրավում, վենչուրային համակարգի զարգացում արտաքին ֆոնդերի, համալսարանների և այլ ակսելերատորների հետ համագործակցության շնորհիվ:

Հայաստանի Հանրապետության դիրքավորում որպես առաջադեմ զարգացող երկիր (ոչ թե ռեսուրսային բազա):

#### **4.1.4 Հետազոտական կյաստեր**

ԱՏԳ ռեզիդենտ ընկերությունների կողմից ստեղծվող բարձր տեխնոլոգիական արտադրանքների մրցունակությունն ապահովելու համար էկոհամակարգի կազմի մեջ են մտնում բարձր տեխնոլոգիաների, այդ թվում բլոկչեյնի, ոլորտի տարբեր

գիտահետազոտական լաբորատորիաներ, ինովացիոն արտադրանքի սերտիֆիկացման կենտրոններ, ինչպես նաև կոմպետենցիաների մասնագիտացված կենտրոններ: Հետազոտական կլաստերի կազմակերպությունների գործունեության հիմնական խնդիրներն են՝

- 1) Ֆունդամենտալ և կիրառական հետազոտությունների ծրագրերի իրականացում՝ ընկերությունների արտադրանքների մրցունակությունը և տեխնիկական ու տեխնոլոգիական կատարելագործումն ապահովելու նպատակով, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների պատվերով;
- 2) Հետազոտական կլաստերի ներդրումային ծրագրերի զարգացման կազմակերպում՝ գիտական պոտենցիալի անընդհատ զարգացման, ԱՏԳ տեխնոլոգիական և նյութատեխնիկական բազայի կատարելագործման նպատակով;
- 3) կիրառական գիտահետազոտական մշակումների իրականացում ԱՏԳ ռեզիդենտ-ընկերությունների և արտաքին կազմակերպությունների պատվերով ;
- 4) Միջազգային գիտական կապերի զարգացում բարձր տեխնոլոգիաների բնագավառում առաջատար համալսարանների և հետազոտական ինստիտուտների հետ, բլոկչեյն կոմպետենցիաների կենտրոնների և բաշխված ռեսուրսների տեխնոլոգիաների (բլոկչեյն) վրա հիմնված հարթակային լուծումների մշակողների հետ;

#### **Արդյունքը՝**

ԱՏԳ ռեզիդենտ ընկերությունների կողմից արտադրվող արտադրանքի մրցունակության բարձրացում, ձեռնարկությունների արտահանման եկամուտների ավելացում;

Երկրում տեխնոլոգիական զարգացման ընդհանուր մակարդակի բարձրացում;

Միջազգային գիտական և տեխնոլոգիական փորձաքննության և փորձի ներգրավում՝ Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիաների ճյուղերի զարգացման համար;

Արտահանման եկամուտների ավելացում՝ բարձր տեխնոլոգիաների և բլոկչեյն տեխնոլոգիաների ոլորտում պատվիրված կիրառական հետազոտությունների իրականացման շնորհիվ;

Կապիտալի ներգրավում, վենչուրային համակարգի զարգացում արտաքին ֆոնդերի, համալսարանների և այլ ակսելերատորների հետ համագործակցության շնորհիվ;

Հայաստանի Հանրապետության դիրքավորում որպես առաջադեմ զարգացող երկիր (ոչ թե ռեսուրսային բազա):

#### **4.1.5 Մայնինգ-կենտրոն**

Ենթադրվում է դատա-կենտրոնի ներգրավում/ստեղծում, որը կներառի տրանզակցիաների ստուգման և առկա ցանցի պահպանման համար նախատեսված ապարատային հաշվողական կենտրոններ և տեխնիկական հարթակներ, թեստավորում և գիտահետազոտական և փորձարարական նախագծային աշխատանքներ, այդ թվում նաև.

- 1) Մայնինգ կենտրոնների շինարարություն՝ սարքավորումների խոշորագույն արտադրողների հետ համատեղ;
- 2) Դատա-կենտրոնների շինարարություն;
- 3) Մասնագիտացված հաշվողական սարքավորման օրինական մատակարարման կազմակերպում;
- 4) Նախագծերի տարածքում իրացվող սպասարկում;
- 5) Հաշվողական սարքավորման մշակում և արտադրություն:

#### **Արդյունքը՝**

Լիարժեք ապարատային տեխնիկական ինֆրաստրուկտուրա, որն ի վիճակի է ապահովել ցանկացած մասշտաբի նախագծի աշխատունակություն;

Նոր բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծում, էներգասպառման կայուն մակարդակի ապահովում:

#### **4.1.6 Լաբորատորիա**

Առաջարկվում է ներգրավել տեղեկատվական կրթական հարթակը, որը ՝ բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացման համար եզակի բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով միավորում է լավագույն ընկերություններին, մասնագետներին և ձեռնարկատերերին.

- 1) Հայաստանի Հանրապետությունում բլոկչեյն տեխնոլոգիաների ուղղությամբ պրոֆեսիոնալ կրթական համակարգի զարգացում ինչպես միջնակարգ և բարձրագույն կրթության մակարդակով, այնպես էլ ընթացիկ կրթական համակարգերի՝ Հայաստանի ԲՈՒՀ-երի, դպրոցների տաղանդավոր երեխաների և պատանիների, արտասահմանյան կրթական հաստատությունների հետ համագործակցության ստեղծում, հեռավար ուսուցման համակարգի մշակում, համաշխարհային ճանաչում ունեցող դասախոսներին Հայաստանի Հանրապետություն հրավիրում, օժանդակում Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններին դպրոցականներ, ուսանողներ և ասպիրանտներ ընտրելիս;
- 2) Հայաստանի Հանրապետության Կառավարությանը խորհրդակցում թվային ակտիվների պետական կարգավորման համակարգի ապագայում առավել էֆեկտիվ համակարգի ստեղծման ապահովման նպատակով;
- 3) Աշխարհին Հայաստանի Հանրապետության հնարավորությունները որպես նոր միջազգային տեխնոլոգիական ակսելերատոր մասայականացնելու և տեղեկացնելու հետ կապված միջազգային միջոցառումների անցկացում;
- 4) Հայաստանի Հանրապետության տարածքում թվային ակտիվների միջոցով ձևավորված և ներդրումներ ներգրավող նախագծերի հեռանկարային և անվտանգության անկախ գնահատման ապահովում:

#### **Արդյունքը՝**

Ակտիվ օժանդակում ժամանակակից ուսումնական համակարգ ստեղծելու գործընթացին;

Երկրում տեխնոլոգիական զարգացման ընդհանուր մակարդակի բարձրացում;

Միջազգային փորձաքննության և փորձի ներգրավում;

Տեղական ձեռնարկատերերի և ընկերությունների համար նոր գլոբալ հնարավորությունների բացահայտում;

Թվային տեխնոլոգիաների ներդրում, տնտեսության թվայնացման միջոցով նոր հնարավորությունների ստեղծում:

#### **4.1.7 Ծառայություններ մատուցող ընկերություններ**

ԱՏԳ զարգացման ռազմավարության իրացման և բիզնես պլանի տնտեսական ցուցանիշներին հասնելու նպատակով ԱՏԳ տարածքում պետք է ստեղծվեն բավարար քանակով մասնագիտացված կազմակերպություններ, որոնք ծառայություններ կմատուցեն նախատեսված գործունեության տեսակներից մեկը կամ մի քանիսը իրականացնող ՀՀ ոչ ռեզիդենտ ընկերություններին և/կամ ընկերություններին՝ ԱՏԳ Օպերատորներին, հետևյալ ուղղություններով.

- 1) Ձեռնարկությունների ընթացիկ գործունեության իրավական, հաշվապահական և հարկային գործառույթների ուղղորդման ոլորտում;
- 2) Գովազդի, մարքեթինգի, PR և առաջխաղացման /այդ թվում արտասահմանյան շուկաներում/ կազմակերպման ծառայությունների մատուցում;
- 3) Պոտենցիալ ներդրողների համար նախագծերի «փաթեթը» ապահովող ներդրումային բրոկերների, իրավաբանների, մարքեթլոգների ծառայություններ;
- 4) ԱՏԳ ռեզիդենտ ընկերությունների բիզնեսի ընթացիկ գործունեությունը և զարգացումը ապահովող այլ ծառայություններ:

#### **Արդյունքը՝**

Ներդրումների /այդ թվում օտարերկրյա/ ներգրավման, բարձր տեխնոլոգիական արտադրության արտահանումից ստացած հասույթի աճի, հայտնաբերության պատենտի /այդ թվում միջազգային/ քանակի աճի մասով ԱՏԳ բիզնես պլանի ցուցանիշների ապահովում;

Բիզնեսի զարգացման և ապրանքաշրջանառության միջազգային շուկաներ դուրս գալու համար իրականացվող սպասարկման մակարդակով և որակով ԱՏԳ ռեզիդենտ ընկերությունների բավարարվածության ստաբիլ բարձր ցուցանիշների ապահովում:

## 5 Մարքեթինգային ռազմավարությունը և ԱՏԳ լոգոն

### 5.1 Մարքեթինգային ռազմավարությունը

ԱՏԳ կազմակերպիչը «ԷԿՈՍ ԱՏԳ» բրենդի առաջըաշման համար իր հերթին սերտորեն կհամագործակցի ինչպես պետական մարմինների, այնպես էլ մասնավոր նախաձեռնողների հետ և կիրականացնի հետևյալ միջոցառումները.

1. Համագործակցություն մասնագիտացված և պրոֆեսիոնալ ՋԼՄ-երի հետ /ներառյալ համացանցի հարթակները/;
2. Մասնակցություն միջազգային ցուցահանդեսներին և պրոֆեսիոնալ թեմատիկ ժողովներին;
3. Ուղիղ կապի ստեղծում հասարակության հետ /էջ համացանցում, էջեր սոցիալական ցանցերում և այլն/;
4. Մասնակցություն տարբեր միջոցառումներին, ֆորումներին և ժողովներին;
5. Շնորհանդեսների, ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցություն;
6. Նախաձեռնողների /մշակողների/ ֆորումների կազմակերպում և մասնակցություն;
7. Բրենդինգ;
8. Գովազդ /այդ թվում համացանցային գովազդ/;
9. Մարքեթինգային վերլուծություն /տվյալների հավաքագրում, վերլուծություն և մշակում/;
10. Որոնման մարքեթինգ / որոնման և համատեքստային օպտիմալացում/:

Արտադրական ուղղվածության գործարկման մասով մարքեթինգային ռազմավարությունն իրականացվելու է հետևյալ կերպ. փնտրելու և գտնելու ենք, շահագրգիռ անձանց ինչպես ՌԴ-ից, այնպես էլ երրորդ երկրներից, որոնց կգրավեն ԷԿՈՍ ազատ տնտեսական գոտու առավելությունները, այն է՝ չկա գործարան կառուցելու տարածքային սահմանափակումներ, կան բոլոր կոմունիկացիաները, չկա աշխատուժի խնդիր, միջազգային կազմակերպությունները հումքի ներմուծման մասով չեն ստեղծի խոչընդոտներ, արդեն արտադրված ապրանքները կարող են վաճառել ինչպես ՌԴ-ում, այնպես էլ մյուս պետություններում:

*Վերոնշյալ մասով արդեն իսկ կան գործարարներ, ում հեղաքրքիր է Էկոս ազապ տնտեսական գոտու տարածքում արտադրության կազմակերպումը: Մինչև 2025 թվականը պլանավորվում է ներգրավել այնպիսի ներդրողների, ովքեր հեղաքրքրված են ՀՀ-ում հիմնել երկաթյա ձողերի արտադրություն, էլեկտրական տրանսֆորմատորների արտադրություն և այլն:*

*Գործընթացը սկսելու է ինֆրաստրուկտուրաների կառուցումից:*

## 5.2 ԱՏԳ լոգո

ԱՏԳ կազմակերպիչը ԱՏԳ-ի համար մշակել է հետևյալ լոգոն՝  
Անվանումը՝ ԷԿՈՍ (ECOS)




Կազմակերպչի կարգավիճակ ստանալուց հետո պլանավորվում է իրականացնել հետևյալ PR գործունեությունը՝

1. Մեդիապլանավորում, աշխատանք մամուլի հետ՝
  - 1) ԶԼՄ մոնիթորինգ՝ ընկերության վերաբերյալ տեղեկատվության բնույթը և քանակը ուսումնասիրելու նպատակով;
  - 2) Հանդիպումներ լրագրողների հետ՝ ինտերվյու, մամլո ասուլիսներ, ճեպագրույցներ, մամլո հաղորդագրություններ և այլն;
  - 3) Մամլո հաղորդագրությունների պատրաստում, ընկերության մասին լրատվանյութերի նախաձեռնում:
2. Արձագանք ԶԼՄ-ներում ընկերության մասին բացասական տեղեկատվություն ի հայտ գալիս, նման փաստերի կանխում: Ճգնաժամային իրավիճակում տեղեկատվական արշավի մշակում:
3. Հատուկ միջոցառումների անցկացում՝ PR և պրոմո ակցիաներ, ասուլիսներ, բիզնես-թրեյնինգներ, սոցիալական ալցիաներ՝ ընկերության գործունեության նկատմամբ հասարակության ուշադրությունը գրավելու նպատակով:
4. Կորպորատիվ կայքի վարում, սոցկայքերում սոցիալական նախագծերի և փիար ընկերությունների տեղեկատվական ուղեկցություն (SMM):

## 6 ԱՏԳ աշխարհագրությունը

ԱՏԳ-ն կտեղակայվի հետևյալ երկու տեղամասերում՝







## 7 ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ


ԱՏԳ-ն կներառի երկու աշխարհագրական տեղորոշումներ.


1. Մայնինգի դատա-կենտրոն, օֆիսային և արտադրական տարածքներ՝ Հրազդան քաղաքում (հողի ընդհանուր մակերեսը 42950 քմ):
2. Օֆիսային, ադմինիստրատիվ տարածքներ Երևան քաղաքում (2000 քմ):
3. Վարձակալությամբ տրվող արտադրական և ոչ արտադրական տարածքներ (մոտ 621600 քմ):

Հրազդան քաղաքում Մայնինգի դատա-կենտրոնի համար առկա է շինություն և օֆիսային շինություն: Մինչև ԱՏԳ-ի գրանցումը պատրաստի կառույցներում կատարվում են նախնական աշխատանքներ:

Հրազդան քաղաքում ԱՏԳ-ի գրանցումից հետո կսկսվեն Մայնինգի դատա-կենտրոնի (պլանում N3) և դրա գործառույթյան համար անհրաժեշտ համապատասխան ինֆրաստրուկտուրայի (էլեկտրամատակարարում, համացանց և այլն) (պլանում N4 ) գործարկման աշխատանքները, առկա ադմինիստրատիվ շենքի (պլանում N6) վերանորոգում, ինչպես նաև անցակետի, մաքսային հսկողության կետի շինարարություն, և երկրորդ ադմինիստրատիվ շենքի (պլանում N1, N2, N5) շինարարություն, ԱՏԳ տարածքի ներսում ճանապարհների անցկացում:

Երևան քաղաքում ադմինիստրատիվ շենքի վերանորոգման աշխատանքները կսկսվեն 2018 թվականի հունիսից 2018 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում: Վերանորոգման աշխատանքների տևողությունը՝ մինչև 1 տարի:





ԱՏԳ շինարարությունը ենթադրվում է իրականացնել փուլ առ փուլ:

Առաջին փուլում նախատեսվում է ստեղծել անհրաժեշտ նվազագույն ինֆրաստրուկտուրաներ և ԱՏԳ գործունեության գործարկման համար նախնական պայմաններ:

Երկրորդ փուլում նախատեսվում է ԱՏԳ ընդլայնում, ինֆրաստրուկտուրաների և տարածքների ընդլայնում: Նախագծի իրականացման այս փուլում ենթադրվում է ստեղծել արտադրական, կրթական և տեղեկատվական ինֆրաստրուկտուրաներ ԱՏԳ ընդլայնված շրջանում:

**8 ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱԶԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԱՏԳ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

Ծառայության անվանումը	Արժեքը (ներառյալ ԱԱՀ)
Աղյունաբերական և տնտեսական շինության փակ տարածքների տրամադրում	Պայմանագրային
Օֆիսային տարածքների վարձակալում	Պայմանագրային
Կոմունալ ծառայություններ (հոսանք, ջուր, կոյուղի, գազամատակարարում)	Ծառայություններ մատակարարների սակագների համաձայն
Բարձր արագությամբ համացանց, հեռախոսակապ	Ծառայություններ մատակարարների սակագների համաձայն

## 9 ԱՏԳ օպերատորներին ներկայացվող պահանջները

Որպես ԱՏԳ օպերատոր կարող են գրանցվել այն իրավաբանական անձինք կամ անհատ ձառնարկատերերը, որոնք իրականացնում են, կամ պլանավորում են իրականացնել գործունեության հետևյալ տեսակներից մեկը կամ մի քանիսը.

Տեղեկատվական համակարգերի վերլուծություն, նախագծում և ծրագրային ապահովում;

Տվյալների մշակման գործունեություն՝ սեփական կամ երրորդ անձանց ծրագրային ապահովման կիրառմամբ;

Տեղեկատվության տեխնիկական և/կամ գաղտնագրային պաշտպանության գործունեություն՝ ներառյալ էլեկտրոնային թվային ստորագրության կիրառումը;

Ներդրման առանձին փուլերի նախագծման, մշակման, իրացման, ներդրման գործունեություն կամ ներդրման գործունեություն կամ իրականացման գործունեություն, ծրագրային և/կամ ապարատածրագրային միջոցների, ամպային հաշվողական տեխնոլոգիաների վրա հիմնված և/կամ դրանց օգտագործմամբ ապարատածրագրային համալիրների աջակցման, ուղեկցման, շահագործման գործունեություն;

ինտեգրված տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների մշակման և ներդրման գործընթացների համալիր կառավարման ծառայությունների մատուցման միջոցով կազմակերպություններին առևտրային գործունեության և կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով խորհրդակցում;

իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի տեղեկատվական պահանջների վերլուծություն (համակարգային վերլուծություն, բիզնես վերլուծություն), տեղեկատվական համակարգերի և ծրագրային ապահովման վերաբերյալ տեխնիկական պահանջների մշակմամբ բիզնես պրոցեսների նորարարության /վերակառուցման/ նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հարցերով խորհրդակցում;

տեղեկատվական համակարգերի և ծրագրային ապահովման մշակման, ներդրման և շահագործման ընթացքում դրանց օգտատերերի տեխնիկական և/կամ տեղեկատվական պահանջներին համապատասխանության աուդիտ;

սարքավորման և հաշվողական մեքենաների համակարգատեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում;

Տրանզակցիայի բլոկների ռեեստրի /բլոկչեյն/ վրա հիմնված կամ դրա օգտագործմամբ ծրագրային և/կամ ապարատածրագրային միջոցների, այլ բաշխված ապակենտրոնացված տեղեկատվական համակարգերի /այդ թվում տեղեկատվության գաղտնագրային պաշտպանության միջոցները օգտագործող/ նախագծման, մշակման, սպասարկման, իրացման, շահագործման հետ կապված գործունեություն;

Ֆինանսական ոլորտի, ֆինանսական տեղեկատվական տեխնոլոգիաների համար ապարատային և ծրագրային տեխնոլոգիաների մշակում, սպասարկում և իրացում;

Արհեստական ինտելեկտի մասնագիտացված բաժիններում նեյրոնային ցանցերի և այլ ալգորիթմների ստեղծում, ուսուցում և տվյալ գործունեության արդյունքների իրացում;

Բժշկական տեխնոլոգիաների, կենսատեխնոլոգիաների մշակում կամ առանձին էտապների մշակում և վերջիններիս արդյունքների իրացում;

ԱՏԳ Օպերատորի մասնակցությամբ մշակված ծրագրային ապահովման օգտագործման միջոցով գլոբալ համակարգչային ցանցում իրականացվող գովազդային, միջնորդական ծառայությունների մատուցման հետ կապված գործունեություն;

Միմյանց հետ և արտաքին միջավայրի հետ (իրերի ինտերնետ) փոխազդելու համար ներկառուցված տեխնոլոգիաներով սարքավորված ֆիզիկական առարկաների հաշվողական-հաղորդակցային ցանցի կոնցեպցիայի մշակման, ներդրման, իրացման հետ կապված գործունեություն;

Կրթական գործունեություն հաշվողական-հաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում, այդ թվում գլոբալ համակարգչային ցանցի միջոցով:

Ծրագրային ապահովման հրատարակման հետ կապված գործունեություն;

գլոբալ համակարգչային ցանցի օգտագործմամբ թվային նշանների /տոկենների/ ստեղծման և տեղադրման հետ կապված ծառայությունների մատուցում /ներառյալ թվային նշանների /տոկենների/ առաջխաղացման, խորհրդատվական և այլ զուգընթաց ծառայությունների մատուցում/;

կրիպտոհարթակի օպերատորի գործունեություն;

կրիպտոակտիվների փոխանակման օպերատորի ծառայություն;

կրիպտոակտիվների մայնինգ;

թվային նշանների /տոկենների/ օգտագործմամբ այլ գործունեություն, այդ թվում արժեթղերի պրոֆեսիոնալ և բորսային գործունեության, ներդրումային հիմնադրամի գործունեության, արժեթղթավորման նշաններ պարունակող, ինչպես նաև սեփական թվային նշանների /տոկենների/ ստեղծման և տեղադրման գործառույթների իրականացում;

ներդրումային հիմնադրամի գործունեություն;

տվյալների մշակման կենտրոնների ծառայություններ;

ծրագրային և/կամ ապարատածրագրային հզորությունների կիրառմամբ ամպային հաշվողական տեխնոլոգիաների վրա հիմնված ծառայությունների մատուցում;

նոր և բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեության այլ տեսակներ:

ԱՏԳ Օպերատորները մինչև գործունեությունը սկսելը ներդնում են և կազմակերպչին հաստատում են հաճախորդների նույնականացման պրոցեդուրայի ներդրման մասին:

## 10 Համագործակցությունը ԱՏԳ-ում

Առաջարկվում է ԱՏԳ շրջանակներում դերերի և լիազորությունների սահմանագծման հետևյալ մոդելը.

**Աղյուսակ 1. Դերերի և լիազորությունների բաշխումը Կազմակերպիչների և մասնակիցների միջև**

Դերը	Միջոցները առևտրային հարթակ ներանցելը	Մայնինգ	Թվային ակտիվներով սակարկություն	Թվային ակտիվներում միջոցների ներգրավում
Մասնավոր անձ	A/R	A/R	A/R	A/R
Կազմակերպություն	A/R	A/R	A/R	A/R
Մարկետփլեյս	S/R	-	S/A	S/A
Քսակ	S/R	S	S/R	S/R
Վարկանիշային գործակալություն	-	-	I/C	I/C/S
Կազմակերպիչ	A/C	A/C	A/C	A/C/S
Բանկ	S/R	-	-	-
Հայաստանի Հանրապետության կոմպետենտ մարմիններ	I/C	I	I	I

Ընդ որում կազմակերպչի դերի նկատմամբ պահպանվում է հետևյալ սկզբունքը. ԱՏԳ բոլոր մասնակիցները պատասխանատու են օրենսդրական պահանջները պահպանելու համար, իսկ Կազմակերպիչն ինքը պատասխանատու է մասնակիցների այդպիսի պահանջներին համապատասխանելու համար:

<b>R</b>	<p><b>Կատարող</b></p> <p>Այս դերը կրող անձը պատասխանատու է նախագծի աշխատանքների իրականացման և նպատակների նվաճման համար: Յուրաքանչյուր փուլում կարող են լինել մի քանի կատարողներ:</p>
<b>A</b>	<p><b>Պատասխանատու</b></p> <p>Այս դերը կրող անձը պատասխանատու է պրոցեսի որակի և արդյունքի համար: Այս դերն ունեցողը ապահովվում է կատարողի հետ հետադարձ կապի համար լիազորություններով: Յուրաքանչյուր փուլում կարող է լինել միայն մեկ պատասխանատու:</p>

<b>S</b>	<p><b>Աջակից</b></p> <p>Հաստատում է արդյունքը պատվիրատուին հանձնելը(խնդրի իրագործումը): Տվյալ դերը կարելի է համատեղել հաշվետու դերի հետ:</p>
<b>C</b>	<p><b>Խորհրդատու, փորձագետ</b></p> <p>Այս դերը կրող անձը ներգրավվում է որպես եզակի գիտելիքների կամ տեղեկատվության կրող: Հաճախ այս դերում հանդես են գալիս ոլորտի փորձագետները:</p>
<b>I</b>	<p><b>Տեղեկացվող</b></p> <p>Անձ, որին անհրաժեշտ է տեղյակ պահել պրոցեսի ընթացքի և արդյունքների մասին, հաճախ միակողմանի կարգով, այնպես ինչպես նա չունի նախագծի ընթացքի վրա անմիջականորեն ազդելու լիազորություն:</p>



# 11 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆ

## **Բրոկչեյն տնտեսության մասով ակնկալվող ցուցանիշները**

Արտահանման հիմնական շուկաներն են.

ԵԱՏՄ երկրներ;

ԵՄ երկրներ;

ԱՄՆ;

Մերձավոր Արևելքի երկրներ;

Չինաստան:

Արտահանման ծավալները որոշելիս հաշվի է առնվել ԱՏԳ պետոնցիալ օպերատորների քանակը, ներդրումների ծավալը, օպերատորների մասնակցության աստիճանը, ինչպես նաև սեկտորներից մեկի արտահանման միջին ծավալը:

Տվյալ բիզնես պլանի նպատակների համար ներդրում է համարվում ցանկացած տեսակի գույք, այդ թվում ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ (մտավոր սեփականության օբյեկտներ), որոնք ուղղակի կամ անուղղակի ներդրվում են իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից՝ ձեռնարկատիրական ոլորտում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող օրենքով չարգելված գործունեության այլ ոլորտում շահույթ /եկամուտ/ ստանալու կամ այլ օգտակար արդյունք ստանալու նպատակով, ճիշտ ինչպես ներդրումներից ստացված և չվերադարձված եկամուտները, ինչպես նաև ներդրումների իրացումից ստացված գույքը և գումարները:

## 11.1 Արտահանման կանխատեսվող ծավալները, մին ԱՄՆ դոլար

	2018-2021	2022-2043
<b>Արտահանման մոտավոր տարեկան ծավալները</b>	5	7,5

## 11.2 Նոր աշխատատեղերի կանխատեսվող քանակը

Նախնական կանխատեսումներով ԱՏԳ Օպերատորները կկարողանան տրամադրել ԱՏԳ համալրման պլանավորված տեմպերի համար նոր աշխատատեղերի զգալի քանակը:

Աշխատատեղերի քանակը կանխատեսելիս հաշվի է առնվել համապատասխան սեկտորներում աշխատատեղերի միջին քանակը և ԱՏԳ Օպերատորների ենթադրվող քանակը:

	2018-2021	2022-2043
<b>Նոր աշխատատեղերի մոտավոր քանակը</b>	50	300

### 11.2.1 ԱՏԳ Կազմակերպչի կողմից ստեղծված աշխատատեղերի քանակը

Գործունեության ընթացքում ԱՏԳ կազմակերպիչ ընկերությունը ստեղծում է մոտ 23 նոր աշխատատեղ ընկերության հիմնական անձնակազմի համար (այդ աշխատատեղերը կներառեն ազատ տնտեսական գոտում շինարարական աշխատանքներին մասնակցող աշխատակիցներին):

Աշխատակիցների կազմը բաղկացած է ղեկավարող անձնակազմի 5 աշխատակցից (տնօրեններ, փոխտնօրեններ, գլխավոր հաշվապահներ, տարբեր ուղղություններով պատասխանատուներ) և վարչական 40 աշխատակցից (մարքեթիոլոգներ, անվտանգության ծառայության աշխատակիցներ, աշխատավորներ, տարբեր մասնագետներ և այլն):

Ղեկավարող անձնակազմի միջին ամսական աշխատավարձը կկազմի մոտ 200 000 դրամ (ներառյալ բոլոր հարկերը), վարչական անձնակազմինը՝ 100 000 դրամ (ներառյալ բոլոր հարկերը):

	2018-2021	2022-2043
<b>ԱՏԳ Կազմակերպչի նոր աշխատատեղերի մոտավոր քանակը</b>	7	15

### 11.3 Ներդրումների ընդհանուր ծավալը

Հաշվի առնելով ԱՏԳ Օպերատորների սպասվող քանակը՝ ներդրումների ընդհանուր ծավալը հաշվի է առնվել ըստ ԱՏԳ Օպերատորների գործունեության տեսակների և աշխատատեղերի քանակի:

	2018-2021	2022-2043
<b>Ներդրումների ծավալը (մլն ԱՄՆ դոլար)</b>	15	30

#### 11.3.1 ԱՏԳ օպերատորների ներգրավում

ԱՏԳ Օպերատորների թվի աճի դինամիկան ըստ ԱՏԳ փուլային զարգացման:

	2018-2021	2022-2043
<b>ԱՏԳ Օպերատորների թիվը</b>	50 (փաստացի 11)	150

### 11.3.2 ԱՏԳ Կազմակերպչի ներդրումների ծավալը

Գործունեության ընթացքում ԱՏԳ կազմակերպիչ ընկերությունը պլանավորում է ներդնել ԱՏԳ-ից 2 մլն դոլար: Ներդրումների գումարը ներառում է շինարարական աշխատանքներ, սարքավորման ձեռքբերում, մարքեթինգ, գովազդ, աշխատակիցների աշխատավարձ, ինֆրաստրուկտուրաների զարգացում և ԱՏԳ զարգացման հետ կապված մնացած ծախսերը:

	2018-2021	2022-2043
<b>ԱՏԳ Կազմակերպչի ներդրումների ծավալը (մլն ԱՄՆ դոլար)</b>	1	3

### Արտադրական գործունեության մասով ակնկալվող ցուցանիշները

#### 11.4 Կանխատեսվող շահագործողների քանակ և նկարագրություն

Պլանավորվում է ներգրավել 2-15 արտադրողների, ինչպես ՀՀ-ից, այնպես էլ ՌԴ այն գործարարներին, ովքեր հետաքրքրված են իրենց արտադրական պրոցեսները, կամ դրանց մի մասը տեղափոխել ՀՀ:

Շահագործողների կողմից շրջանառու միջոցներում կանխատեսվող տարեկան ներդրման չափը կազմում է 9.44 միլիարդ ՀՀ դրամ:

Առաջին երկու շահագործողների կողմից պլանավորվում է ստեղծել 120-150 աշխատատեղ:

#### 11.5 Կանխատեսվող եկամուտ

Արտադրությունները գործարկելուց հետո (որը նախատեսվում է 2024 թվականին), պլանավորվում է տարեկան 23,6 միլիարդ ՀՀ դրամ շրջանառություն:

#### 11.6 Ներդրման և ֆինանսավորման ընդհանուր ծավալը

Տվյալ տարածքում արտադրական տարածքների կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կկազմի մոտ 944 միլիոն ՀՀ դրամից մինչև 2,36 միլիարդ ՀՀ դրամ:

## 12 ԱՏԳ-ում պլանավորվող գործունեության տեսակները

«Էկոս» ԱՏԳ-ում պլանավորվում է իրականացնել գործունեության հետևյալ տեսակները՝ համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարի՝ 2013 թ. սեպտեմբերի 19-ի N874-Ն հրամանով հաստատված տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների.

10.41.0	Յուղերի և ճարպերի արտադրություն
10.42.0	Մարգարինի և համանման ուտելի յուղերի արտադրություն
10.51.0	Կաթի մշակում, կարագի և պանրի արտադրություն
10.81.0	Շաքարի արտադրություն
14.11.0	Կաշվե հագուստի արտադրություն
14.12.0	Արտահագուստի արտադրություն
14.13.1	Վերնագգեստի արտադրություն
14.19.1	Գլխարկների արտադրություն
14.19.2	Նորածինների համար հագուստի արտադրություն
14.19.3	Սպորտային հագուստի արտադրություն
14.19.9	Այլ հագուստի և պարագաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում
14.20.0	Մորթե արտադրատեսակների արտադրություն
14.31.0	Տրիկոտաժե գուլպեղենի արտադրություն
14.39.0	Այլ տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն
15.11.1	Մորթու վերջնամշակում և ներկում
15.11.2	Կաշվի դաբաղում և վերջնամշակում. բնական և բաղադրանյութային կաշվի արտադրություն
15.12.1	Ճամպրուկների և պայուսակների արտադրություն
15.20.0	Կոշիկի արտադրություն
16.10.0	Բնափայտի սղոցում և ռանդում
16.21.0	Նրբատախտակի և պանելների արտադրություն
16.22.0	Հատակի հավաքովի փայտածածկերի արտադրություն
16.23.0	Շինարարական փայտե կոնստրուկցիաների արտադրություն, ատաղձագործական գործունեություն
16.24.0	Փայտե տարայի արտադրություն
16.29.1	Մամլած բնափայտից կամ համանման նյութերից կրակ վառելու ցուպիկների, հատիկների, սալերի (բրիկետների) արտադրություն
16.29.9	Փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից այլ արտադրատեսակների արտադրություն
17.11.0	Թաղանթանյութի արտադրություն
17.12.0	Թղթի և ստվարաթղթի արտադրություն
17.21.0	Ալիքավոր թղթի և ստվարաթղթի, թղթից և ստվարաթղթից տարայի արտադրություն
17.22.0	Սանիտարահիգիենիկ և կենցաղային նշանակության թղթե արտադրատեսակների արտադրություն

17.23.0	Գրասենյակային թղթե պիտույքների արտադրություն
17.24.0	Պաստառների արտադրություն
17.29.0	Թղթե և սովարաթղթե այլ արտադրատեսակների արտադրություն
18.13.0	Նախատպագրական և տպագրական գործունեությանն առնչվող ծառայություններ
20.15.0	Պարարտանյութերի և ազոտական միացությունների արտադրություն
20.16.0	Առաջնային ձևերով պլաստմասսաների արտադրություն
20.41.0	Օճառի և մաքրող, լվացող ու փայլեցնող միջոցների արտադրություն
21.10.0	Հիմնական դեղագործական արտադրանքի արտադրություն
21.20.1	Դեղագործական պատրաստուկների և նյութերի արտադրություն
22.11.1	Ռետինե դոդերի և օդախցիկների արտադրություն
22.11.2	Ռետինե դոդերի պաշտպանաշերտի վերականգնում
22.19.0	Այլ ռետինե արտադրատեսակների արտադրություն
22.21.0	Պլաստմասսե սալերի, թերթերի, խողովակների և տրամատների արտադրություն
22.22.0	Փաթեթավորման համար պլաստմասսե արտադրատեսակների արտադրություն
22.23.0	Շինարարական պլաստմասսե արտադրատեսակների արտադրություն
22.29.0	Այլ պլաստմասսե արտադրատեսակների արտադրություն
23.51.0	Ցեմենտի արտադրություն
23.52.0	Կրի, գիպսի և գաջի արտադրություն
23.61.1	Բետոնե հավաքովի շինարարական կոնստրուկցիաների արտադրություն
23.61.2	Բետոնե որմնաբլոկների արտադրություն
23.61.9	Բետոնե այլ պատրաստի շինվածքների արտադրություն, շինարարությունում օգտագործման համար
23.62.0	Գիպսե շինվածքների արտադրություն, շինարարությունում օգտագործման համար
23.63.1	Ապրանքային բետոնի (բացառությամբ ասֆալտբետոնը) արտադրություն
23.63.2	Ասֆալտբետոնի արտադրություն
23.64.0	Շինարարական չոր շաղախի արտադրություն
23.65.0	Թեթևավոր ցեմենտից շինվածքների արտադրություն
23.69.0	Բետոնից, գիպսից և ցեմենտից այլ շինվածքների արտադրություն
23.70.0	Քարի սղոցում, մշակում և հարդարում
24.10.0	Թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն
24.20.0	Պողպատե խողովակների, սնամեջ տրամատների և համանման կցամասերի արտադրություն
24.31.0	Ձողերի սառնածոցում
24.32.0	Նեղ շերտերի սառնազլոցում
24.33.0	Սառը դրոշմում կամ ճկում
24.34.0	Մետաղալարի արտադրություն
24.41.1	Թանկարժեք մետաղների արտադրություն
24.42.0	Ալյումինի արտադրություն
24.43.0	Կապարի, ցինկի և անագի արտադրություն

24.44.0	Պղնձի արտադրություն
24.45.0	Այլ գունավոր մետաղների արտադրություն
24.51.0	Թուջի ձուլում
24.52.0	Պողպատի ձուլում
24.53.0	Թեթև մետաղների ձուլում
24.54.0	Այլ գունավոր մետաղների ձուլում
25.11.0	Մետաղե կոնստրուկցիաների և դրանց մասերի արտադրություն
25.12.0	Մետաղե դռների և լուսամուտների արտադրություն
25.21.0	Կենտրոնական ջեռուցման համակարգի ջեռուցիչ մարտկոցների և շոգեկաթսաների արտադրություն
25.29.0	Այլ ցիստեռնների, պահեստարանների (ռեզերվուարների) և մետաղե տարողությունների արտադրություն
25.30.0	Շոգեկաթսաների արտադրություն, բացի կենտրոնական ջեռուցման համակարգի կաթսաներից
25.50.0	Մետաղի կռում, մամլում, դրոշմում և գլոցում. փոշեմետաղագործություն
25.61.0	Մետաղների մշակում և պատում
25.62.0	Մետաղների մեխանիկական մշակում
25.71.0	Դանակային արտադրատեսակների, սեղանի մետաղե սպասքի արտադրություն
25.72.0	Կողպեքների և ծխնիների արտադրություն
25.73.0	Ձեռքի գործիքների արտադրություն
25.91.0	Մետաղե տակառների և համանման տարողությունների արտադրություն
25.92.0	Թեթև մետաղներից փաթեթանյութերի արտադրություն
25.93.0	Մետաղալարե արտադրատեսակների, շղթաների, զսպանակների արտադրություն
25.94.0	Սեղմակների, պտուտակապարուրակային արտադրատեսակների արտադրություն
25.99.0	Այլ պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում
26.11.0	Էլեկտրոնային բաղադրամասերի արտադրություն
26.12.0	Հավաքած էլեկտրոնային մեկուսատախտակների արտադրություն
26.20.0	Համակարգիչների և ծայրամասային սարքավածքների արտադրություն
26.30.0	Կապի սարքավորանքի արտադրություն
26.40.0	Կենցաղային էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն
26.51.0	Չափիչ, ստուգիչ, փորձարկիչ և նավագնացական գործիքների ու սարքերի արտադրություն
26.60.0	Ճառագայթահարող, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի արտադրություն
27.11.0	Էլեկտրաշարժիչների, գեներատորների և տրանսֆորմատորների արտադրություն
27.12.0	Էլեկտրաբաշխիչ և կարգավորիչ սարքերի արտադրություն
27.20.0	Մարտկոցների և կուտակիչների արտադրություն
27.31.0	Թեթևօպտիկական մալուխների արտադրություն
27.32.0	Այլ էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրություն

27.33.0	Էլեկտրահաղորդալարերի միացման սարքվածքների արտադրություն
27.40.0	Էլեկտրական լուսավորման սարքավորանքի արտադրություն
27.51.0	Կենցաղային էլեկտրասարքերի արտադրություն
27.52.0	Կենցաղային ոչ էլեկտրական սարքերի արտադրություն
27.90.0	Այլ էլեկտրական սարքավորանքի արտադրություն
28.11.0	Շարժիչների և տուրբինների, բացառությամբ ավտոմեքենաների, մոտոցիկլային և օդագնացական, արտադրություն
28.12.0	Հիդրավլիկական սարքավորանքի արտադրություն
28.13.0	Այլ պոմպերի և ճնշակների արտադրություն
28.14.0	Ծորակների և կափույրների արտադրություն
28.15.0	Առանցքակալների, ժանանվակների, շարժաբերների և ատամնավոր փոխանցիչների մասերի արտադրություն
28.21.1	Էլեկտրական և այլ արդյունաբերական կամ լաբորատոր վառարանների և թուջահալոցների, այդ թվում՝ թափոնների այրման համար կայանքների, արտադրություն
28.21.2	Հրածորանների արտադրություն
28.21.3	Ոչ շարժական էլեկտրական բուխարիների, լողավազանների ջրատաքացուցիչների արտադրություն
28.21.4	Ոչ շարժական, ոչ էլեկտրական արևային վահանակների, արևային ջրատաքացուցիչ համակարգերի, շոգե, նավթի, յուղի և համանման այլ վառարանների և տաքացուցիչ սարքավորանքի արտադրություն
28.21.5	Մեխանիկական հնոցների, ցանցերի, մոխրի հեռացուցիչների արտադրություն
28.22.0	Ամբարձիչ և բեռնման-բեռնաթափման սարքավորանքի արտադրություն
28.23.0	Գրասենյակային մեքենաների և սարքավորանքի (բացի համակարգիչներից և ծայրամասային սարքվածքներից) արտադրություն
28.24.0	Շարժաբերով ձեռքի գործիքների արտադրություն
28.25.0	Սառեցնող և օդափոխիչ ոչ կենցաղային սարքավորանքի արտադրություն
28.29.0	Ընդհանուր նշանակության այլ մեքենաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում
28.30.0	Գյուղատնտեսության և անտառային տնտեսության համար մեքենաների արտադրություն
28.41.0	Մետաղամշակման մեքենաների արտադրություն
28.49.0	Այլ հաստոցների արտադրություն
28.91.0	Մետաղագործական արդյունաբերության համար մեքենաների արտադրություն
28.92.0	Հանքագործական արդյունաբերության, բացահանքերի շահագործման և շինարարության համար մեքենաների արտադրություն
28.93.0	Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի մշակման համար մեքենաների արտադրություն
28.94.0	Մանածագործական, կարի, մորթե և կաշվե արտադրատեսակների պատրաստման համար մեքենաների արտադրություն

28.95.0	Թղթի և ստվարաթղթի պատրաստման համար մեքենաների արտադրություն
28.96.0	Ռետինի և պլաստմասսաների մշակման համար մեքենաների արտադրություն
28.99.0	Հատուկ նշանակության այլ մեքենաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում
30.20.0	Երկաթուղային շարժակազմի արտադրություն
30.30.9	Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող սարքերի համար մասերի արտադրություն
30.40.0	Մարտական մեքենաների արտադրություն
30.91.0	Մոտոցիկլների արտադրություն
30.92.0	Հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն
30.99.0	Այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում
31.01.0	Գրասենյակների և խանութների կահավորման կահույքի արտադրություն
31.02.0	Խոհանոցի կահույքի արտադրություն
31.03.0	Ներքնակների արտադրություն
31.09.0	Այլ կահույքի արտադրություն
32.12.3	Ոսկերչական զարդերի արտադրություն
32.30.0	Սպորտային արտադրատեսակների արտադրություն
32.40.0	Խաղերի և խաղալիքների արտադրություն
32.50.0	Բժշկական և ատամնաբուժական գործիքների ու սարքերի արտադրություն
33.11.1	Մետաղե կոնստրուկցիաների, մետաղե դռների և լուսամուտների նորոգում
33.11.2	Մետաղե ցիստեռնների, պահեստարանների (ռեզերվուարների) և բեռնարկղերի նորոգում
33.11.3	Մետաղե խողովակների և խողովակաշարերի նորոգում և տեխնիկական սպասարկում
33.11.4	Ջեռուցիչ կաթսաների նորոգում և տեխնիկական սպասարկում
33.11.5	Շոգեկաթսաների և այլ շոգեարտադրիչների նորոգում և տեխնիկական սպասարկում
33.11.6	Միջուկային ռեակտորների նորոգում և տեխնիկական սպասարկում
33.11.7	Հրազենի նորոգում և տեխնիկական սպասարկում
33.11.9	Այլ պատրաստի մետաղե արտադրատեսակների նորոգում
33.12.1	Մեքենաշինության արտադրանքի նորոգում
33.12.2	Դրամարկղային մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում
33.13.1	Չափիչ, ստուգիչ, փորձարկիչ, նավագնացական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում
33.13.2	Ռենտգենյան, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում
33.13.3	Արդյունաբերական նշանակության օպտիկական սարքավորանքի և գործիքների, լուսանկարչական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում



33.14.1	Տրանսֆորմատորների, էլեկտրական շարժիչների, գեներատորների, բաշխիչ վահանների և կոմուտացիոն սարքավածքների նորոգում և տեխնիկական սպասարկում
33.16.0	Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող սարքերի նորոգում և տեխնիկական սպասարկում
33.17.1	Երկաթուղային գնացքաքարշերի և շարժակազմի նորոգում և տեխնիկական սպասարկում
33.19.0	Այլ սարքավորանքի նորոգում
33.20.0	Արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի տեղադրում
38.11.0	Ոչ վնասակար թափոնների հավաքում
38.31.0	Զարդոնի մասնատում
38.32.0	Թափոնների տեսակավորում և մշակում երկրորդային հումքի ստացման համար
39.00.0	Թափոնների վնասագերծում և այլ մշակում
62.01.0	Ծրագրային ապահովման մշակում
62.02.1	Էլեկտրոնային համակարգերի նախագծում, թեստավորում և մշակում
62.02.9	Խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում չներառված ուրիշ խմբավորումներում
62.03.0	Համակարգչային համակարգերի կառավարման գործունեություն
62.09.0	Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում այլ գործունեություն
63.11.1	Տվյալների հիմնապաշարների և տեղեկատվական ռեսուրսների մշակում և կիրառում
63.11.2	Օպերատիվ ռեժիմում կրիպտոարժույթների՝ բիտկոյնների և այլ ալտկոյնների ստեղծում
63.11.3	Օպերատիվ ռեժիմում ծրագրային ապահովմանն առնչվող սպասարկման ծառայությունները՝ կիրառական ծրագրերի և համակարգչային ծրագրային ու տեխնիկական միջոցների սպասարկում
63.12.0	Վեբ-պորտալների հետ կապված գործողություններ
63.99.0	Տեղեկատվության մատակարարման այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում

## 13 ԱՏԳ ինֆրաստրուկտուրան

ԱՏԳ ստեղծելիս կկիրառվեն ԱՏԳ-ն անհրաժեշտ ինֆրաստրուկտուրայով ապահովելու համար բոլոր անհրաժեշտ միջոցները՝ գործող օրենսդրության պահանջներին համապատասխանելու համար:

Մուտքը և ելքը ԱՏԳ կգտնվի Կազմակերպչի և Հայաստանի մաքսային մարմինների հսկողության տակ: Կգործի հսկիչ-անցագրային ռեժիմ:

ԱՏԳ-ն կգործի այն տարածքներում, որոնք առանձնացված կլինեն Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից:

ԱՏԳ ամբողջ տարածքը (բացառությամբ օպերատորի վարձակալած տարածքներից) կհսկվի վիդեոհամակարգի միջոցով: Կապահովվի պատշաճ լուսավորություն:

Տարածքում կտեղադրվի մաքսային հսկիչ կետ ԱՏԳ տարածք մուտք գործող և տարածքից դուրս եկող ապրանքների ու սարքավորումների մաքսային զննում իրականացնելու և հայտարարագրելու համար: Կտրամադրվեն համապատասխան ծառայողական շինության փակ տարածքներ և ժամանակավոր պահպանման պահեստ: Ապրանքների հսկման և զննման համար կտեղադրվեն անհրաժեշտ սարքավորումներ:

ԱՏԳ տարածքում կգործի անվտանգության շուրջօրյա ծառայություն:

Կապահովվի ապրանքները ԱՏԳ տարածքի ներսում ազատ տեղաշարժի հնարավորություն:

ԱՏԳ տարածքում կգործեն անվտանգության, առաջին բուժօգնության և հակահրդեհային անվտանգության համակարգեր:

ԱՏԳ տարածքը կունենա անխափան ջրամատակարարում և ջրահեռացում, էներգամատակարարում, գազամատակարարում, աղբահանում և կապի անհրաժեշտ միջոցներ (հեռախոսակապ և միացում Համացանցին), ինչպես նաև ապահովված կլինի սանիտարահիգիենիկ նորմերի պահանջներին հետևելու համար անհրաժեշտ միջոցներով: Հաշվի առնելով ԱՏԳ տարածքում տնտեսական գործունեության առանձնահատկությունները նախատեսվում է նաև երկաթուղային հաղորդակցությունը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ